# COVID-19 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՂՈՔԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

**Հիմնաբառեր.** *կորոնավիրուս, տնտեսություն, աջակցման փաթեթներ, հնարավորություններ*

**Տաթևիկ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ**

*Օրբելի վերլուծական կենտրոնի հետազոտող-փորձագետ*

*12018 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ և ընդունվել մագիստրատուրա: 2019-ից առ այսօր Օրբելի վերլուծական կենտրոնի հետազոտող-փորձագետ է:*

*Կորոնավիրուսով պայմանավորված ճգնաժամը թեև ունի առողջապահական հիմք, այդուհանդերձ, այն առավելագույնս ընդգծում է երկրում առկա տնտեսական խնդիրները՝ միաժամանակ բացահայտելով նոր հնարավորություններ: Հայաստանի տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցության ուղղությունները կայուն և հիմնական աճ ապահովող ճյուղերն են, որոնց էլ ուղղված են պետության՝ գործարար միջավայրի բարելավման և սոցիալական աջակցության ծրագրերը, և որոնց արդյունավետ կիրառման դեպքում երկարաժամկետում հնարավոր է ապահովել բազմագործոն տնտեսական աճ:*

Կորոնավիրուսը հասարակությունների համար վարքագծային փոփոխություններ ենթադրող ճգնաժամ է: Այն, ի տարբերություն վերջին 20 տարիներին Հայաստանում գրանցված ճգնաժամերի, ունի առողջապահական հիմք, և պատահական չէ, որ այդ առումով ենթադրում է Whatever it takes (whatever the cost) մոտեցում: Աշխարհի այն երկրները, որտեղ տարածվել է կորոնավիրուսը, կիրառում են տարբեր ֆինանսատնտեսական գործիքներ, իրականացնում բազմաբնույթ միջոցառումներ՝ նախ՝ կանխելու վարակի տարածումը, ապա հաղթահարելու տնտեսական բացասական հետևանքները: Վերջիններս բազմաշերտ են և կախված յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման մակարդակից ու կառուցվածքից: Ճգնաժամային իրավիճակներում, տնտեսության հետագա զարգացման տեսանկյունից, կարևոր է տնտեսավարողների գործունեու-




ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**ՀՀ ՀՆԱ կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ճյուղերը (2017-2019 թթ., %)**

թյան խթանումը՝ չլուծարվելու և բնականոն տնտեսական պարբերաշրջանի զարգացման փուլին վերադառնալու համար, իսկ սոցիալական աջակցության օգնությամբ հնարավորություն է ստեղծվում կենսամակարդակը պահելու առնվազն մինչճգնաժամային շեմի վրա:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության յուրահատկությունները՝ կառավարությունն ընտրել է ֆինանսական կառույցները որպես խողովակ օգտագործելու միջոցով տնտեսության առավել կայուն և մրցունակ ճյուղերի ֆինանսավորման տարբերակը: Հիմնական և կայուն ճյուղերում գործունեություն ծավալող տնտեսավարողներին է ուղղված ՀՀ կառավարության հայտարարած 150 մլրդ ՀՀ դրամ աջակցությունը, արդեն այս պահի դրությամբ հաստատված կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ինը փաթեթները, որոնցից օգտվելու, այսպես կոչված, ընդհանուր սկզբունքը տնտեսավարողների համար բարվոք վարկային և հարկային պատմություն ունենալն է, հետագա վերահսկողության իրականացումը: Վարկերը տրամադրվում են ՀՀ ազգային արժույթով՝ բացառությամբ որոշ դեպքերի, ինչը լուծում է փոխանակային փոխարժեքի զսպման հարցը: Պետությունը թիրախավորել է այն ոլորտները, որոնք կկրեն կորոնավիրուսի բացասական հետևանքները և որոնք հետագայում տնտեսական ակտիվացման հիմք կարող են դառնալ՝ ապահովելով երկարաժամկետ, կայուն, բազմագործոն աճ: Օժանդակություն ստանալու շահառուների կամ տնտեսավարողների մեջ, ի թիվս ֆինանսական շուկայի որոշ կազմակերպությունների, ընդգրկված չեն նաև վիճակախաղերի և շահումով խաղերի կազմակերպիչները և այլ նմանատիպ գործունեություն ծավալողներ, քանի որ, ըստ էության, դրանք տոքսիկ աճի ապահովման գործոններ են:

Գծապատկեր 1-ում արտացոլված են ՀՀ-ում կորոնավիրուսի տնտեսական ազդեցության ուղղությունները, որոնք ընդգրկում են ՀՆԱ կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ճյուղեր[1]: Ամենախոշոր ճյուղերն են մշակող արդյունաբերությունը, մանրամեծածախ առևտուրը, գյուղատնտեսությունը, շինարարությունը և անշարժ գույքի հետ կապված գոր-

[1] Տվյալներն ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջի:

ծունեությունը, մշակույթը, զվարճությունների և հանգստի ոլորտը:

Մշակող արդյունաբերության աճն ապահովվել է սննդի, խմիչքի և ծխախոտի արտադրության հաշվին. 2019 թ. ՀՀ արտահանման կառուցվածքում «Պատրաստի սննդամթերք, ալկոհոլ և ոչ ալկոհոլային խմիչքներ, ծխախոտ» ապրանքախմբի տեսակարար կշիռը 24.4 տոկոս էր՝ նախորդ տարվա 23 տոկոսի փոխարեն: Եվ ՀՆԱ կառուցվածքում, և արտահանման մեջ դրա դերն էականորեն ավելացել է: Ոլորտում արձանագրվող դրական տեմպը պահպանելու համար ստեղծված իրավիճակում կարևոր նշանակություն ունի այլ երկրների, մասնավորապես՝ Վրաստանի և Ռուսաստանի կողմից բեռնափոխադրումների չսահմանափակումը: Այս ճգնաժամը ևս մեկ անգամ ընդգծում է ապրանքների արտահանման բազմազանեցման անհրաժեշտությունը, և սա մի նոր հնարավորություն է նաև նոր շուկաներում դիրքավորվելու կամ արդեն իսկ ունեցած մասնաբաժինները մեծացնելու համար: Պետության առաջարկած առաջին փաթեթի շրջանակում այս ոլորտի տնտեսավարողները կարող են լուծել ընթացիկ իրացվելիության հետ կապված հարցեր՝ ներգրավելով վարկային միջոցներ համաֆինանսավորմամբ, վերաֆինանսավորմամբ կամ սուբսիդավորմամբ: Կազմակերպությունը կարող է դիմել ֆինանսական կառույցին՝ աշխատակիցների աշխատավարձերի, կոմունալ վճարների, հարկային վճարումների, նոր սարքերի, հումքի՝ հետագայում պատրաստի արտադրանք ստանալու նպատակով ներմուծման համար միջոցներ ներգրավելու: Հատկապես նոր սարքերի և սարքավորումների գնման կամ ներկրման համար տրամադրվող վարկային հարմար միջոցները ստեղծված իրավիճակում կխրթանեն տվյալ կազմակերպության գործունեությունը՝ հետագայում շուկայում ամրապնդվելու և առավել մրցունակ լինելու համար:

ՀՀ արտահանման կառուցվածքում մյուս կարևոր ապրանքախումբը պղինձն է, որի տեսակարար կշիռն արտահանման կառուցվածքում, 2019-ի տվյալներով, 23.7 տոկոս է: Միջազգային բորսայում պղնձի գների անկումը և դրա հետ կապված ռիսկը, որը պայմանավորված է Չինաստանում պղնձի պահանջարկի կրճատմամբ, և որին բաժին է ընկնում աշխարհում պղնձի սպառման գրեթե կեսը[2], պետք է դիտարկել մի քանի տեսանկյունից. նախ՝ ՀՀ-ից պղնձի արտահանման հիմնական ուղղությունը Բուլղարիան է՝ 2019-ի տվյալներով՝ 40 տոկոս, ապա Շվեյցարիան՝ մոտ 30 տոկոս, հաջորդը՝ Չինաստանը՝ մոտ 28 տոկոս: Ինչպես նավթի, այնպես էլ պղնձի պարագայում առաջարկն ավելցուկային է: Ըստ գնահատականների՝ մեկ տոննա պղնձի սահմանային ծախսը մոտ 5000 դոլար է, իսկ մարտի 27-ի դրությամբ այն փակվել է 4774 դոլարի շեմի վրա[3]: Համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատականների՝ վերջին շրջանում Չինաստանի տնտեսությունը ցույց է տալիս վերականգնման նշաններ՝ չնայած առկա մի շարք ռիսկերին[4], իսկ կորոնավիրուսի էպիկենտրոնն արդեն մնացյալ աշխարհն է: Լոնդոնի բորսայի տվյալների համաձայն, մարտի 23-ից սկսած, պղնձի գների կտրուկ անկումներ չեն նկատվել, և կարելի է ենթադրել, որ այս միտումը կպահպանվի Չինաստանի տնտեսության վերականգնման խորապատկերում: Այստեղ կարևոր է նաև Բուլղարիայի ներկա տնտեսական վիճակը, որտեղ ևս հայտարարված է արտակարգ դրություն: Ամեն դեպքում, Էկոնոմիկայի նախարարության փոխանցմամբ, շարունակվում է համագործակցությունը հայաստանյան պղինձ արդյունահանող ընկերությունների հետ՝ քայլերը հստակեցնելու նպատակով: Միջազգային բորսայում, պղնձի գնի անկմանը զուգահեռ, աճ է գրանցում ոսկու գինը. մար-

[2] Statista.com, Global refined copper consumption distribution by region 2018.
[3] GRAPHIC-Rupture of copper demand to fuel surplus as industry hit by virus, Nasdaq.com
[4] Chinese economy normalizing but stark risks remain: IMF, Reuters.com




ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**Պղնձի գնի շարժընթացը (տոննա/դոլար) ամսական կտրվածքով**

տի 30-ի դրությամբ՝ մեկ տարվա կտրվածքով, այն աճել է շուրջ 26 տոկոսով[5]: Այս իրավիճակում ևս մեկ անգամ արդիական է դառնում Ամուլսարի ոսկու ծրագրի հարցը, որը վերջնական լուծում է պահանջում:

2019-ին ամենաբարձր տնտեսական աճ արձանագրել է կացության և հանրային սննդի ծառայությունների ոլորտը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 27.2%-ով, ինչը զբոսաշրջության աճի կարևոր արտահայտություններից է: Համաձայն որոշ գնահատականների՝ համաշխարհային զբոսաշրջության անկումը, որը հաշվարկված է 2003 թվականի SARS-ի սցենարով, 2020 թվականին կկազմի 30-50 մլրդ ԱՄՆ դոլար, ընդ որում, զբոսաշրջիկների թիվը կարող է կրճատվել 1-3 տոկոսի շրջանակում, մինչդեռ ընթացիկ տարվա աճը գնահատվում էր 3-4 տոկոս[6]: Նման անորոշության պայմաններում այս գնահատականները կարող են փոփոխվել, այնուամենայնիվ, սա մոտավոր պատկերացում է տալիս այն վնասների մասին, որ կարող է կրել համաշխարհային զբոսաշրջությունը, որի մի մասն է նաև Հայաստանը: 2019 թ. ՀՀ այցելած զբոսաշրջիկների թիվն ավելացել էր 14.7 տոկոսով, և նախատեսվում էր մոտ 15 տոկոս աճ 2020 թ.: Զբոսաշրջության ակտիվացմանը նպաստող գործոններից մեկը բյուջետային ավիաընկերությունների մուտքն էր ՀՀ, սակայն, կորոնավիրուսով պայմանավորված, ավիացիայի կանգը, արտերկրից ժամանող քաղաքացիների մուտքի սահմանափակումներն էականորեն կդանդաղեցնեն ոլորտի աճը: Որպես ամենաթարմ օրինակ պետք է նշել Իրանի քաղաքացիների ազգային տոնը՝ Նովրուզը, որի շրջանակում, սովորաբար, դեպի ՀՀ իրանցիների մեծ հոսք է արձանագրվում:

Մի շարք երկրներում, կորոնավիրուսի դեմ պայքարի համատեքստում, պայմանավորվածություն է ձեռք բերվում կառավարության և հյուրանոցային բիզնեսի մասնակիցների միջև՝ հյուրանոցներում, հյուրատներում մեկուսացման ենթակա անձանց տեղավորելու վերաբերյալ: Նման գործընթաց սկսվել է նաև Հայաստանում, որը որոշակիորեն կնպաստի այդ ոլորտում ակտիվության ապահովմանը: Բացի այդ,

[5] Goldprice.org
[6] Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպություն, Զբոսաշրջություն և COVID-19, Unwto.org

կառավարարության երրորդ փաթեթն ուղղված է հենց զբոսաշրջության, կացության և հանրային սննդի կազմակերպման, առողջապահության և այլ ծառայությունների ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսավարողներին: Տրամադրվող վարկերն առաջին երկու տարում անտոկոս են, երրորդ տարում՝ 12 տոկոս:

Մյուս կարևոր ճյուղերից մեկը գյուղատնտեսությունն է, որի տեսակարար կշիռն աստիճանաբար նվազում է ՀՆԱ կառուցվածքում: Ստեղծված ճգնաժամային իրավիճակն առավել ակնհայտ է դարձնում երկրում առկա խնդիրները: Վերջին օրերին լուրեր տարածվեցին, որ Ռուսաստանը սահմանափակում է որոշ հացահատիկային ապրանքների արտահանումն այլ երկրներ: Թեև նշված խնդիրը քննարկվում է ԵԱՏՄ շրջանակում[7], սակայն միայն այն հանգամանքը, որ Ռուսաստանից ՀՀ է ներկրվում ցորենի մոտ 88 տոկոսը, մտահոգիչ է պարենային ապահովության տեսանկյունից: Ոլորտին ուղղված փաթեթն իր մեջ ներառում է մայր գումարի վճարման արտոնյալ ժամկետ, զրո տոկոս տոկոսադրույք, իսկ առանձնահատուկ գործիքներից մեկը համաֆինանսավորումն է, երբ պետությունն իր վրա է վերցնում տրամադրած գումարի չափի որոշ տոկոսը՝ կախված վարկավորման նպատակից: Օրինակ՝ եթե ֆիզիկական անձը խոզաբուծության և թռչնաբուծության նպատակով վարկ է վերցնում, պետությունը վարկառուին հնարավորություն է տալիս գործելու 30 տոկոսի չափով պակաս գույքային ապահովությամբ:

Զարգացած և զարգացող մի շարք երկրների համեմատությամբ, որտեղ իրական և ֆինանսական հատվածներն առավել սերտաճած են, Հայաստանում այդ երկու հատվածի միջև առկա է որոշակի ճեղքվածք: Մասնավորապես՝ ֆինանսական շուկայի երկարաժամկետ հատվածի սաղմնային վիճակը հնարավորություն չի տալիս ամբողջությամբ օգտագործելու բոլոր այն գործիքները, որոնք թույլ են տալիս ստեղծված իրավիճակում այլ գործիքների միջոցով իրացվելիություն ապահովել շուկայում: Ինչպես տեսանք, այս խնդիրը պետությունը լուծում է ուղղակի վարկավորմամբ, մինչդեռ կապիտալի շուկայի զարգացածության պայմաններում կառավարությունը և կենտրոնական բանկը կունենային ճգնաժամը հաղթահարելու առավել արդունավետ գործիքակազմ: Երբ Doing business-2020-ի զեկույցում ՀՀ-ն, նախորդ զեկույցի համեմատ, 6 դիրքով անկում գրանցեց, պատճառը փոքր ներդրողների պաշտպանությունը, ցուցակված ընկերությունների քանակն էր[8]: Թեպետ որոշակի օրենսդրական փոփոխություններ են իրականացվել արժեթղթերի շուկայի աշխուժացման ուղղությամբ, սակայն տրամադրվող աջակցության շրջանակներում սա ևս մեկ հնարավորություն է՝ ընկերություններին ներկայացնելու կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառման պահանջ կամ ձեռք բերելու համաձայնություն:

Մեկ այլ առաջնային ուղղություն է պետության սոցիալական աջակցության տրամադրումը: Այս պահի դրությամբ կառավարությունն առաջարկում է 5 սոցիալական աջակցության փաթեթ, որի շրջանակներում տրամադրվում է միանվագ նպաստ այն քաղաքացիներին, որոնք ունեն անչափահաս երեխա և որոնք մարտի 13-ից մինչև մարտի 26-ն ընկած ժամանակահատվածում ազատվել են աշխատանքից, ինչպես նաև համապատասխանում են այլ պայմանների: Բացի այդ, եթե ընկերությունը հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ունեցել է 2-50 աշխատող, և վճարված աշխատավարձի փաստացի ֆոնդը չի նվազել նշված ժամանակահատվածում, շահառուներին տրամադրվում է միանվագ դրամաշնորհ:

Նշենք, որ առաջիկայում շուկաներում մրցունակ լինելու համար կարճաժամկետ

[7] ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի խոսքը ԱԺ-Կառավարություն հարցուպատասխանի ընթացքում, Armenpress.am

[8] Համաշխարհային բանկ, Doing Business 2020, Doingbusiness.org

թվացող նշված փաթեթների բարենպաստ պայմանները երկարաժամկետում առավել մեծ արդյունք են ապահովելու, հաշվի առնելով, որ դրանք ենթադրում են նաև ենթակառուցվածքների զարգացում, ինչը մեծապես կախված է պետություն-մասնավոր հատված արդյունավետ երկխոսությունից: Միաժամանակ, այդ ծրագրերը տնտեսավարողների համար չպետք է դառնան լրացուցիչ, էժան, սպեկուլյատիվ փողի աղբյուր, ընդ որում պետությունը նպատակային վարկավորմամբ տրամադրվող ծրագրերի նկատմամբ պետք է իրականացնի մշտադիտարկում:

Միկրոմակարդակում՝ առավելությունների և ստեղծած հնարավորությունների շարքում են նաև բոլոր այն պետական էլեկտրոնային հարթակները, որոնցից մինչ օրս բնակչությունը չէր օգտվում, կրթական համակարգում՝ հեռավար ուսուցման անցման փորձը, մի շարք ընկերությունների համար՝ հակաճգնաժամային սցենարներ ունենալու գիտակցումը: Բացի այդ, սա շատ լավ փորձ է առաքման ծառայություններ մատուցող, SS ոլորտի ընկերությունների համար:

Այսպիսով՝ կորոնավիրուսային համավարակի ազդակները վերաբերում են երկարաժամկետում բազմագործոն տնտեսական կառուցվածքի ապահովմանը՝ հիմքում ունենալով ամուր առողջապահական համակարգ, որն աշխարհին կարող է ներկայանալ մրցունակ ծառայություններով: Թեպետ, ինչպես աշխարհի բազմաթիվ երկրներ, Հայաստանը նույնպես հետընթաց կունենա նախատեսված տնտեսական աճից[9], մասնավորապես, ըստ թե՛ ՀՀ Կենտրոնական բանկի, թե՛ միջազգային կառույցների գնահատականների, այն ընկած կլինի 0-ից 1-ի տոկոսի միջակայքում[10], այնուամենայնիվ այս ճգնաժամը տնտեսական համապատկերն ընդգծող ու նոր գաղափարներ առաջադրող մի ուղեցույց է:

[9] ՀՀ կենտրոնական բանկ, Գնաճի հաշվետվություն, Cba.am
[10] Ֆիտչ վարկանիշային գործակալություն, Fitchratings.com

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումներ, ՀՀ կառավարության որոշումներ 2020, մարտ, ապրիլ E-gov.am
2. ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ, ՀՆԱ կառուցվածքի վերաբերյալ տվյալներ
3. ՀՀ կենտրոնական բանկ, Գնաճի հաշվետվություն, Cba.am
4. Համաշխարհային բանկ, Doing Business 2020, Doingbusiness.org
5. Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպություն, Զբոսաշրջություն և COVID-19, Unwto.org
6. ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի խոսքը ԱԺ-Կառավարություն հարցուպատասխանի ընթացքում, Armenpress.am
7. Ֆիտչ վարկանիշային գործակալություն, Fitchratings.com
8. Goldprice.org
9. Nasdaq.com, GRAPHIC-Rupture of copper demand to fuel surplus as industry hit by virus,
10 Reuters.com, Chinese economy normalizing but stark risks remain: IMF
11. Statista.com, Global refined copper consumption distribution by region 2018

**Татевик АРУСТАМЯН**
*Магистрант АГЭУ*

## COVID-19 В АРМЕНИИ: МЕРЫ ПО НЕЙТРАЛИЗАЦИИ ЭКОНОМИЧЕСКИХ ПОСЛЕДСТВИЙ

Вызванный коронавирусом кризис имеет в своей основе здравоохранительные проблемы. Он еще сильнее подчеркивает имеющиеся в стране экономические проблемы, при этом открывает для Армении новые возможности. Направлениями, которые могут снизить воздействие пандемии коронавируса на экономику Армении, служат сферы, традиционно обеспечивающие ее устойчивое развитие и стабильный рост. Разработанные правительством программы социального содействия и поддержки бизнеса нацелены именно на стимулирование этих отраслей. В случае эффективной реализации данные меры станут основой для обеспечения многофакторного экономического роста в долгосрочной перспективе.

**Ключевые слова:** *коронавирус, экономика, пакеты поддержки, возможности*

**Tatevik ARUSTAMYAN**
*Graduate student of ASUE*

## COVID-19 IN ARMENIA: MEASURES TO OFFSET THE ECONOMIC CONSEQUENCES

The coronavirus crisis is based on health care issues. It highlights existing economic problems in the country with providing new opportunities. Directions of the impact of coronavirus on the Armenian economy are its sustained and key growth sectors. Hence, the state programs which the government is setting, are intended to support the social and business environment. Effective implementation of measures will provide the basis for long-term multifactorial economic growth.

**Keywords:** *coronavirus, economy, support packages, opportunities*